

ՀԱՅԿԱԿԱՆ

ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

(Շար. տե՛ս Բազմալեզու, 1969, ք. 8-10, էջ 244)

ՏԱՐԵԹԻԻ ԶԱՏԿԱՆԻՇՈՐ

Բ. Վերադիր. Լուսնային տարին տասնըմէկ օր կարճ է արեւային պարզ տարեին. այսինքն լուսինը իր 12 ամիսները ամբողջացնելէ ետք, կը սկսի իր տասներեքերորդ շրջանը եւ կը հասնի տասնըմէկերորդ օրուան՝ երբ Դեկտեմբեր 31ին վերջնայ նաեւ արեւային տարին եւ սկսի նորը։ Յունուարի լուսինը միշտ պայմանաւորուած է Դեկտեմբերինէն, այնպէս որ եթէ Դեկտեմբերի մէջ լուսինը տասնըմէկօրեայ է, տասներինը օր ալ կ'ունենայ Յունուարի մէջ եւ քսանին կը ծնի լուսինը, ինչպէս պատահեցաւ 1969 թուականին։ Դեկտեմբերի տասնըմէկ օրերը կ'ըսուին վերադիր նոր տարուան լուսինին։ Յաջորդ լուսինները փոխի՞նք քսանը՝ ինը եւ երեսուն օրուան հեռավորութեան լրաց կը դառնան։ 1969ի լուսնային տարին կը վերջանայ Դեկտեմբեր տասին եւ հետեւաբար քսաներկու օրուան վերադիր կու տայ 1970ի Յունուարին։ Երբ վերադիրներու դուռարը երեսունը անցնի, միայն աւելի օրերը վերադիր կ'ըլլան եւ երեսունը կը քնջուի։ Օրինակ. 1970ի Դեկտեմբերին տասնըմէկ օր եւս պլտի աւելնայ եւ 1971ի վերադիրը պլտի ըլլայ 3. (22 + 11 — 30 = 3)։

Տոմարական օրացոյցներու մէջ⁵⁸, վերադիրները բաժնուած են ամսաթիւներու վրայ, աստեղագիտական փորձառու-

թիւներու հետեւանքով։ Նախապէս, միայն տասներինը վերադիրները կը նշանակուէին, որոնց ամսաթիւները մինչեւ 1582 ընաւ չէին փոխուած։ Նոր տոմարի աստեղագէտները՝ երկու հարիւր տարին անգամ մը վերադիրները կը փոխեն որպէսզի լուսնի ծնունդները տարբեր ամսաթիւներու վրայ դնեն եւ իրական փոփոխութիւնները, բոլոր ամսաթիւներուն վերադիր կու տան մէկէն մինչեւ երեսուն, որոնցմէ տասներինը միայն դործածական են ինչպէս էին նաեւ հին տոմարի մէջ։

Վերադիր — Ոսկեգիր — Իննետասներեակ — Շրջան լուսնի։ Վերադիրները, թէ՛ հին եւ թէ՛ նոր տոմարի մէջ, տասներինը տարուան կարգ մ'ունին, որ վերջնապէս դարձեալ կը սկսի։ Տարուան կարգը նշանակող թիւերը կ'ըսուին Ոսկեգիր, Իննետասներեակ, Շրջան լուսնի։ Մինչ ոսկեգիրը կ'ընթանայ առանց ոստումի մէկէն մինչեւ տասներինը, վերադիրէ վերադիր անցքը տասնըմէկ թիւ կը ցատկէ եւ մէկ անգամ միայն, իւրաքանչիւր շրջանի մէջ, տասներկու թիւի ոստում ունի. ներկայ դարուս տասներեքերորդ վերադիրն է փի, իսկ տասներեքերորդը ԻԹ. (17 + 12 = 29)։

58. Տե՛ս Յովհ. Իմաստասէրի մատենագրութիւնը, էջ 160-183։ Սիւրմէկեան, Տոմարագիտութիւն, Վենետիկ, 1818, էջ 57-62։

Գտնել տարուամ վերադիրը

Տարեթիվերու՝ տասներիննով բաժանու-
մի մնացորդը ցոյց կու տայ վերադիրին
կարգը որ առնուած է թուականի առաջին
տասներկը տարիներու վերադիրներէն:
Մնացորդէն ոսկեզիրին անցնելու համար
պէտք է զիտնալ որ քրիստոնէական թը-
ւականի մէկին, ոսկեզիրի երկրորդ տա-
րին էր, հետեւաբար քրիստոնէական տա-
րեթիվերու մնացորդին վրայ պէտք է մէկ
աւելցնել ոսկեզիրին հասնելու համար:
Հայկական թուականի սկզբնաւորութեան՝
ոսկեզիրը երեք էր, ուստի Հայոց մեծ եւ
փոքր տարեթիվերու մնացորդին պէտք է
երկու աւելցնել, զոտնելու համար ոսկեզի-
րի տարին: Օրինակ. 1969ի մնացորդն է
տասներկու եւ ոսկեզիրը 13. Հայոց Ռեժի-
թիւի մնացորդն է 11, ոսկեզիրը՝ 13.
(11 + 2 = 13):

Հայկական տոմարի յուլեան բաժինը,
երկու շաբթ վերադիրներ ունի. մին Շի-
րակացիի եւ միւսը Իմաստասէրի: Եր-
կուքն ալ նոյն ամսաթիւերը ունին. հե-
տեւաբար կարելի է Իմաստասէրի «նոր
վերադիրները» սրբազրութիւն նկատել:
Նոր տոմարի մուտքով Իմաստասէրի վե-
րադիրներն ալ զործածութենէ կը դա-
դրին, միայն երուսաղէմի Հայոց պա-
տրիարքական թեմն է որ կը շարունակէ
զործածել զանոնք:

Հայոց շաբթուն տոմարի վերադիրներ-
մը իննեւտասներեակ⁵⁹ չունին եւ առ այժմ
մեր նիւթէն զուրս կը մնան:

Վերադիրներու եւ անոնց լրումներուն
ցանկը պիտի հրատարակենք Զատիկ եւ
ծնադատիկ յօդուածին հետ:

Վերադիրները տարեթիվերու աստեղա-
դիտական յատկանիշներն են, որոնց միջո-
ցով երեսունըվեց շարունակեալ տարիներ
իրարմէ կը զանազանուին: Օրինակ. 1969ի
վերադիրը ժա է որ նախապէս 1950ի վե-
րադիրը եղած է եւ պիտի ըլլայ նաեւ
1988ինը. միջանկեալ տարիներէն ոչ մէ-
կը, բացի 1969էն, ժաը իրը վերադիր
ունի:

Վերադիրով Տարեթիւ ճշտելու օրինակներ

1 — Անդրէասի երկուհարիւրամեայ կա-
նոնին սկիզբն ու վերջաւորութիւնը:

Յովհաննէս Իմաստասէրի Ժամանակա-
դրութեան մէջ կը կարդանք. «Ի վերտու-
թենէն մինչեւ ի քսանամեակն Կոստան-
դիանոսի ամբ Յ (300) եւ ի քսան ամէն
Կոստանդիանոսի մինչեւ ցերկուհարիւրե-
կին զիւտ յԱնդրէասայ՝ ամբ ԻԳ = 23»⁶⁰:
Գումարենք տարիները.

Միւրտութենէն Կոստանդիանոսի	
քսանամեակը	300
Յիսուսի ծնունդէն-միւրտութիւն	30
Քսանամեակէն-Անդրէասի կանոն	23
	353

Սակայն կան ուրիշ վկայութիւններ ալ
ուր Յիսուսի ծնունդէն Անդրէասի կանո-
նին հեռաւորութիւնը կը վերածուի 351
տարիի: Յ. Բա. 353ը զուգընթացն է
Հոռմի թեմութեան 1106 թիւին մինչ 351ը
1104ին:

«Յերկրորդ ամէն Փիլիպպոսի մինչեւ ի
քսանամեակն Կոստանդիանոսի եւ անոր
ԻԳ, ինի ճԳ = 104, Մ = 200 Անդրէա-
սին»⁶¹:

«Առ Փիլիպպոսի կայսեր, յառաջնում
ամի թաղաւորութեան նորա, չիւնութեան
բաղաբին Հոռմայ յԻմփիլեայ, լցաւ հա-
զար ամ եւ զերկրորդ ամի թաղաւորու-
թեան նորա եզին սկիզբն ալլոյ թուակա-
նի, յետ մեծապէս տօնելոյ զնաւակատիս
չիւնումոյ բաղաբին ի լրման հազարե-
կին»⁶²:

«Եւ ինին յերկրորդ ամէն Փիլիպպոսայ
մինչեւ քսանամեակն Կոստանդիանի մե-
ծի՝ ամբ 200 = 81 եւ յետ ալլսորիկ, յա-
ւուրս որդւոյ նորա Կոստանդեայ, մետա-
սաներորդ ամի թաղաւորութեան նորա,

59. Նոյն էջ 222:

60. Նոյն էջ 132:

61. Նոյն էջ 132:

62. Նոյն էջ 246:

եղաւ կանոնեալն յԱնդրէասայ Մ = 200
ամաց բերող զորս ի նմայն: Որպէսզի
լինել յերկրորդ ամէն Փիլիպպոսի մինչեւ
ցկարգուածն երկուհարիւրեկին ամբ ճԴ
= 104: Եւ լինին մինչեւ ցյանկումն եր-
կուհարիւրեկին, յերկրորդէն Փիլիպպեայ
ամբ ՅԴ = 304»⁶³:

Այս վկայութիւնները կ'ուշացնեն Փի-
լիպպոսի կայսրութիւնը⁶⁴, բայց նոր լոյս
մը կը ափռեն այն միջոցին չուրջ որ կ'եր-
կարի հազարամեակէն Անդրէասի կանո-
նին միջեւ, նոր տարեթիւեր երեւան բե-
րելով: Գումարներն տարիները Իմաստա-
սէրի ըսածին համաձայն.

Տարեթիւ հազարամեակի	247
Փիլիպպոսի Բ. տարիէն մինչեւ	
քսանամեակ	81
Քսանամեակէն Անդրէասի կանոն	23
	351

Նոյն ժամանակամիջոցները պահելով
եթէ հիմ առնենք Սամուէլ Անեցիի «Ի
Քրիստոսէ թուականը կ'ունենանք.

Հազարամեակի տարի	248
Հազարամեակէն քսանամեակ	
Կոստանդիանոսի	81
Քսանամեակէն Անդրէասի կանոն	23
	352

Իսկ եթէ Եւսեբիոսի հետեւինք, կ'ու-
նենանք $250 + 104 = 354$:

63. Նոյն. էջ 246:

64. Փիլիպպոսի կայսրութիւնը կը սկսի. 244ին
հազարամեակէն երեք տարի առաջ:

65. Յովհ. Իմաստ. մասնադատութիւնը, էջ 246:

Վկայութիւններու առաջին խումբին
համաձայն, Յիսուսի ծնունդէն Անդրէա-
սի կանոնին միջոցը 353 տարի էր. մինչ
երկրորդ խումբին համաձայն, նոյն մի-
ջոցը կը վերածուի 351 տարիի:

Ապահովաբար Իմաստասէր, միեւնոյն
զրութեան մէջ եւ միեւնոյն զէպքին հա-
մար, տարբեր թիւեր պիտի չնշանակէր.
այս պարագան ինքնին ապացոյց մըն է
որ օրինակողը զիտակցաբար կամ անզի-
տակցաբար սրբազրած է ընազրին տարե-
թիւերը եւ կամ ուրիշ ժամանակաշրջան-
ի քաջելով աղուցած է Իմաստասէրի ըը-
նազրին:

Նոյն ինքն Իմաստասէր «Յաղապս ըստ
Հռոմոց ամսոց...» զրութեան մէջ կու
տայ Անդրէասի կանոնի տարին ճշ-
տելու բանալին. «Եւ է սկիզբն երկու-
հարիւրեկին ի չորրէն Ապրիլի չորեքտա-
սանկրոզն լուսնոյ զատկաց եւ վախճան
քսանեւհինգն Մարտի»⁶⁵: Երկհարիւրեա-
կին սկիզբն է չորս Ապրիլի զատկական
լրումը եւ վերջաւորութիւնը քսանհինգ
Մարտին:

Արդարեւ երբ Շիրակացիի վերադիրնե-
րուն կարգը շարունակենք զէպի Քրիս-
տոս տարիներուն վրայ, կը տեսնենք որ
Ապրիլ չորսի լիալուսինը յատկանշին է
Հռոմի շինութեան 1106ին, Եւսեբիոսի
հաշուումներու 356ին, Սամուէլ Անեցիի
354ին եւ Քրիստոսի Դիոնիսեան թուա-
կանի 353ին:

Ուստի զատկական լուսիններէն առաջ-
նորդուելով պէտք է երկու աւելցնենք
պատմական զէպքերու գիծով եկած տա-
րեթիւերուն վրայ, հազարամեակէն Ան-
դրէասի կանոնին միջոցը 104ին բարձրա-
ցնելով 106ի. հետեւեալ կերպով.

	Հռոմի շինութեան	Դիոնիսիոսի	Սամուէլ Անեցիի	Եւսեբիոսի եւ Իմաստասէրի
Հազարամեակի տարեթիւերը	1000	247	248	250
Հազարամեակէն Անդրէասի կանոնին միջոցը	106	106	106	106
	1106	353	354	356

Սակայն իրականին մէջ, յաւելեալ երկու տարիները կը սրբազրեն Հոռոմի նոր թուականի տարին. որովհետեւ իմաստասէշը Փիլիպպոս կայսեր Բ. տարին կը նոյնացնէ Հոռոմի շինութեան նոր թուականի առաջին տարին հետ:

2.— Հոռոմի շինութեան նոր թուականի տարին Յովհաննէս իմաստասէշի համաձայն:

Իմաստասէշը «Յաղագս ըստ Հոռոմոց ամսոց եւ ԴԺ.րդ լուսնոյ զատկաց...» աշխատասիրութեան մէջ կը ճշտէ Հոռոմի նոր թուականի տարին, ըսելով.

«Որովհետեւ այս (Հոռոմի) թուականին սկիզբն էր այն տարին, որուն զատկական լիալուսինը Ապրիլ 13ին էր: Եւ իննետասները տասնըվեց անդամ իրենք իրենց վրայ չըմելով կը հասնին 304 թիւին. վերջին տարին, որուն զատկական լիալուսինը Մարտ 25ին էր: Բայց երկուհարիւր եւ կը վերջանար Մարտ քսանհինգինով. տասն անգամ ամբողջացնելով լսորակը եւ տասը տարի ալ վրան դնելով. ապա կը

սկսի հայկական թուականը դարձեալ ապրիլ տասներեքի լրումով»⁶⁶:

Այս տողերուն մէջ, իմաստասէշը այնքան յստակ է, որ ցոյց կու տայ թէ ինք ունէր զատկական լիալուսիններու ամբողջական ցանկը, սկսելով Հոռոմի նոր թուականի առաջին տարիէն:

Սովորական կարծիք է որ Հոռոմի նոր թուականը սկսած է հաղարամեակէն անմիջապէս ետք, 1001ին, յետ Քրիստոսի 248ին: Սակայն իմաստասէշին յիշատակած լիալուսինները թոյլ չեն տար որ կարենանք ընդունիլ այս կարծիքը: Արդարեւ նոր թուականի առաջին տարուն՝ Ապրիլ 13ի լիալուսինը յատկանիչն է յետ Բ. 249ի եւ ոչ թէ 248ի: Նոր թուականը 304րդ տարին ալ, Մարտ 25ի լիալուսինով կը փակուի, Քրիստոսի թուականը 552ի հասցնելէ ետք: Ապա 553ի յատկանիչը եղող Ապրիլ 13ի լիալուսինը կը բանայ Հայոց թուականի առաջին տարին:

Ժամանակադրական այս ճշտումէն ետք՝ երբ 249ի եւ իր զուգընթաց տարեթիւերուն վրայ աւելցնենք պատմական հետաւորութիւնները՝ կ'ունենանք հետեւեալ պատկերը.

66. նոյն. էջ 247:

	Հոռոմի շինութեան	Դիոնիսիոսի Յ. Գա.ի	Ստուել Ամեցիի ի Գա.է	Եւսեբիոսի ի ծննդեկէն Գա.ի
Հաղարամեակի տարեթիւերը	1000	247	248	250
Յաւելեալ երկու տարիները	+ 2	+ 2	+ 2	+ 2
Հոռոմի նոր թուականի առաջին տարիները	1002	249	250	252
	+ 80	+ 80	+ 80	+ 80
Քսանամեակի կոստանդինուսի	1082	329	330	332
	+ 24	+ 24	+ 24	+ 24
Առաջին տարի Անդրէասի կանոնին	1106	353	354	356
	+ 199	+ 199	+ 199	+ 199
Վերջին տարի Անդրէասի կանոնին	1305	552	553	555
	+ 1	+ 1	+ 1	+ 1
Առաջին տարի Հայոց թուականին	1306	553	554	556

Այս հարցին յաւելեալ լուսարանութիւն մը կ'ունենանք երբ հաշուումներու հիմ առնենք ողիմպիականները կամ նահանջ տարիները: Դիտելիս իստի տարեթիւերով հաշարածեակը կու գայ 256 ողիմպիադի Գ. տարին, որմէ ետք բնական էր նոր թուականը սկսիլ 257 ողիմպիադի առաջին տարով. ասիկա տոմարական ստիպում մըն է նահանջները չորրորդ տարիներուն վերայ բերելու համար: 257 ողիմպիադի առաջին տարին, Դիտելիս իստի հաշուով յետ Բ. 249ն է եւ Հոմէր շինութեան 1002ը:

Գ. Տաճուտէր. Տոմարական տանուտէրերն են տասներկու կենդանակերպ համաստեղութիւնները, որոնք՝ բացի իրենց անունէն, որեւէ աստեղագիտական հանգամանք չունին, եւ կը պատկանին դուշակարանական ուսումներու ճիւղին:

Քրիստոնէական եւ Հայոց մեծ թուականի համար, տանուտէրերու կարգը հետեւեալն է:

1. Աղեղնաւոր, 2. Այծեղջիւր, 3. Զըրհոս, 4. Զուկ, 5. Ոռ, 6. Յուլ, 7. Երկաւոր, 8. Ոնցեղետին, 9. Առիւծ, 10. Կոյր, 11. Կշիւ, 12. Կարիճ:

Իշխող կենդանակերպը գտնելու համար, տարեթիւը կը բաժնենք 12ով, մնացորդը ցոյց կու տայ տանուտէրին կարգը: Օրինակ. 1968ի տանուտէրը կարիճն է, որովհետեւ մնացորդը զէրոյ է: Հայոց մեծ թուականի 1416ի տանուտէրն ալ կարիճ է, որովհետեւ 12ով բաժանումը մնացորդ չի տար: Ուստի 1968ի զուգընթաց է Հայոց 1416 տարեթիւը միայն եւ իրեն մերձաւոր տարիներէն ոչ մէկը:

Հայոց փոքր թուականի տանուտէրները գտնելու համար, մնացորդին վրայ պէտք է չորս աւելցնել, որովհետեւ փոքր թիւի առաջին տանուտէրը եղած է խոյը, որ կենդանակերպներու հինգերորդն է: Օրինակ. Սարկաւադի 7 = 90րդ տանուտէրը եղած է կոյր (90+4): 12 = 10, որ «կոյս»ին կարգն է:

Դ. Ինդիկտիոն. Ինդիկտիոնը, իբր ժամանակի միութիւն, կը սկսի մեծն Կոստանդիանոսի հրամանագրով Յ. Ք. 313ի

Յունուար 1ին: Նախապէս կը նշանակէր արտասովոր տուրքի զանձումին 15 տարիները, որ աւարտելուն՝ նորէն կը սկսէր: Տասնհինգ տարիներէն իւրաքանչիւրը, ինդիկտիոնի տարի կ'անուանուէր. երբ կ'ըսէին ինդիկտիոնի տասներորդ տարին է, կը հասկնային որ արտասովոր տուրքի տասներորդ տարուան մէջն էին:

Առանձինն առնուած՝ ինդիկտիոնը չի կրնար թուական նկատուիլ, որովհետեւ միայն տասնհինգ տարուան տեւողութիւն մըն է, բայց երբ իշխանական տարիէ մը քով գտնուի, կը դառնայ թուական եւ կու տայ ժամանակի ճիշտ հաւաստութիւնը 313ին:

Ինդիկտիոնը գտնելու համար, քրիստոնէական տարեթիւէն կը հանենք 312 եւ ապա զայն կը բաժնենք 15ով, քանորդը կ'անտեսենք. մնացորդը ինդիկտիոնի տարին է:

Հայոց մեծ թուականի առաջին տարին կը հանդիպի ինդիկտիոնի առաջին տարին. հետեւաբար երբ հայկական մեծ տարեթիւը մը բաժնենք տասնհինգով, մնացորդը կ'ըլլայ ինդիկտիոնի տարին: Հայոց փոքր թիւի առաջին տարին կը սկսի ութը ինդիկտիոնով. հետեւաբար Իմաստասէրի տարիներուն ինդիկտիոնը գտնելու համար պէտք է եօթը աւելցնել: Օրինակ. քրիստոնէական 1251ը, Հայոց մեծ թիւին 699ը եւ փոքրին 167ը նոյն տարիներն են.

(1251 — 312) : 15 = մնացորդ 9,

699 : 15 = մնացորդ 9ը,

(167 + 7) : 15 = մնացորդ 9ը:

Հայոց յուլեան եւ սարկաւազադի անշարժ տոմարին օրացոյցը

Յուլեան եւ սարկաւազի տոմարներու օրացոյցին օրինակը՝ զոր կը հրատարակենք այս յօդուածին ետեւը, կը ներկայացնէ տարուան ամսաթիւերը եւ անոնց չարաթաղերը: Իր այս վիճակին մէջ՝ օրացոյցը կը պատկանի նախաքրիստոնէական եւ Յ. Ք. բոլոր տարեթիւերուն:

տուր, յիսնակաց բարեկենդան է» Սահմի Տի մօտաւոր կիրակին = Նոյեմբեր 18ի մօտաւոր կիրակին յիսնակաց է: «Քսան-եւեօթն ած ի Սահմի տուր, տուր Յակոբայ բարեկենդան է» Սահմի 29ի = Դեկտեմբեր 9ի մօտաւոր կիրակին տուր Յակոբ բարեկենդան է: «Վեց ած ի Տրէ տուր, ձմեռնամուտ է» Տրէ 8 = Դեկտեմբեր 18ին ձմեռնամուտ է: «Տասնեւեօթն ած ի Տրէ տուր, Ծննդեան բարեկենդան է Տրէ 19 = Դեկտեմբեր 29ի մօտաւոր կիրակին Ծնունդի բարեկենդան է (տես անդ էջ 11-13): «Քսանեւէինդ ած ի Տրէ տուր, Ծնունդ է Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» Տրէ 27ին որ է 1209, 1210, 1211 եւ 1212 Յունուար 6ը:

Ուշադրութեան արժանի կէտ մըն է որ առաջին ածէքը Մարտի դարնանամուտին համար է եւ ոչ թէ Յունուարի է փետրուարի տօներուն: Պատճառը նահանջներն են, որոնք տարեթիւերու նոր ամսանահանջ կու տան սկսելով Մարտ 1էն եւ կը փոխեն տօներու շարժուն ամսաթիւերը, որոնց առաջինը դարնան դիշերահաւասարն է եւ վերջինը յաջորդ տարուան Յայտնութիւնը եւ փետրուարի տօները:

Օրինակ. մ. թ. 1212 (յառաջացած թիւ 1213) նահանջ տարուան Մարտին, տարեթիւը կ'ունենայ 1212:4=303 նահանջ եւ 303:30=10+3 մնացորդ ամսանահանջ, որուն 25 ածէք տալով ոչ թէ 1212ի ծնունդը կը դտնենք այլ նոր ամսանահանջէն պայմանաւորուած 1213ի (յառաջացած 1214ի) Ծնունդի եւ Յայտնութեան շարժուն ամսաթիւը. հետեւեալ կերպով.

3 + 25 Տրէի մէջ = Տրէ 28ին
որ Ծնունդ եւ Յայտնութիւն է Յիսուսի

1213ին (յառաջացած 1214ին) հինգ շաբաթի է
1214ին (յառաջացած 1215ին) ուրբաթ է
1215ին (յառաջացած 1216ին) շաբաթ է
1216ին (յառաջացած 1217ին) կիրակի է

1216ը նահանջ է, Յունուարի եւ փետրուարի տօներէն վերջ, Մարտին կը սկսի 4 ամսանահանջը, որ կը փոխէ յաջորդ տօներուն ամսաթիւերը սկսելով դարնանամուտէն մինչեւ 1220 (յառաջա-

ցած 1221) Մարտին մտած 5 ամսանահանջը: Միջանկեալ շրջանին Յայտնութեան ամսաթիւերը կ'ըլլայ 4+25=Տրէ 29ին, որ 1217ին (յառաջացած 1218ին) երեք շաբաթի է, 1218ին չորեքշաբաթի է, 1219ին հինգշաբաթի է եւ 1220ին ուրբաթ է:

Ուստի ամսանահանջով եւ ածէքներով յանկուած տօները չեն փոխեր ամիսներու կարգը որովհետեւ Դեկտեմբերէ վերջ եւ կող տօները նոր տարեթիւի Յունուարին եւ փետրուարին դիմաց կու դան:

Սարկաւազ վարդապետի օրացոյցին մէջ այլ (տես Ստանախորանը, Յովհաննէս Ի-մատասէրի մատենագրութիւնը էջ 160-183) Նաւասարդը կը սկսի Օգոստոս 11ին եւ օրացոյցի ութերորդէն իններորդ աւիսն է, պահելով հանդերձ «տարեմուտ Սարկաւազի» տիտղոսը: Կարելի է՞ խոռոխտորդ օրացոյցին Յունուարը վեցերորդ ամիս ընել, Նաւասարդ = Օգոստոսի առաջնութիւն տալով: Որովհետեւ նըման բան մը կը չիօթեցնէ տարեթիւերուն շարժումն օրերը եւ լուսինի ծնունդներուն ամսաթիւերը, քանի որ ամիսներու մէջ միայն Յունուարը կը պայմանաւորուի նախընթաց տարեթիւի վերջին լուսինէն եւ ամառվըջի շարժումն օրէն: Օրինակ. 1969ի Դեկտեմբեր 31ը չորեքշաբաթի էր եւ 1970ի Յունուարը սկսաւ Հինգշաբաթով: 1969 Դեկտեմբերը 22 վերադիր կու տայ 1970ին եւ Յունուար 8էն-9ին կը ծնանի այս տարուան առաջին լուսինը: Տոմարական այս իրողութիւնները անկարելի կը դարձնեն ամիսներու կարգին մէջ փոփոխութիւն մտցնելը: Սարկաւազ վարդապետը դիտէր այս ածէքը եւ ասոր համար է որ Նաւասարդ = Օգոստոսը մնացած է օրացոյցի ութերորդ աւիսը:

Սարկաւազ վարդապետի ԾԼԲ աղիւսակին շարժումն օրերը լիովին կը համապատասխանեն իր խոռոխտորան օրացոյցին: Եթէ այս օրացոյցը բաղդատենք Բ. Ե. Թումանեանի աղիւսակ օրացոյցին հետ (տես Առձեռն տոմարացոյց, Երեւան, 1965, էջ 37) կը տեսնենք որ Թումանեանի օրացոյցը սկսելով Նաւասարդ 1 = Օգոս-

տոս 11էն մինչեւ Քաղոց 23 = Դեկտեմբեր 31, չի համապատասխաներ Սարկաւազ վարդապետի շարթուան օրերուն:

Օրինակ, առնենք փոքր թուականի առաջին տարին, որուն հօթներեակն է Գ. Ը եւ բաղդատենք օրացոյցները:

Մեծ քիւ Հայոց 533 եւ փոքր քիւ 1.

ՇԼԲ տօնացոյցի եւ
կառնախորանի օրացոյցը

Եօրներեակ Գ.

Յունուար 1 = Քաղոց 24 չորեքշաբթի

Յունուար 6 = Քաղոց 29, Յայտնութիւն, երկուշաբթի

Փետրուար = 9 Մեհեկան 3, Առաջաւոր, կիրակի

Մարտ 2 = Մեհեկան 24, Բուն Բարեկենդան, կիրակի

Ապրիլ 13 = Ահեկի 6, լրումն լուսնի, կիրակի

Ապրիլ 20 = Ահեկի 13, Ձատիկ, կիրակի

Յունիս 1 = Մարերի 25, Պենտեկոստէ, կիրակի

Յուլիս 27 = Հրոտից 21, Վարդապառ, կիրակի

Օգոստոս 1 = Հրոտից 26, ուրբաթ

Օգոստոս 10 = Աւելեաց 5, կիրակի

Օգոստոս 11 = Նաւասարդ 1, երկուշաբթի

Դեկտեմբեր 31 = Քաղոց 23, չորեքշաբթի

Բ. Ե. Թումանյանի
աղիւսակին օրացոյցը

Հատման կէտ Գ.

նոյն

նոյն

նոյն

նոյն

նոյն

նոյն

նոյն

նոյն

նոյն

նոյն

նոյն

կիրակի

երեքշաբթի

Կը տեսնենք որ Սարկաւազի օրացոյցին մէջ Աւելեաց 5 կիրակիին կը յաջորդէ Նաւասարդ 1 երկուշաբթին մինչ թումանյանի աղիւսակին մէջ, Աւելեաց 5 կիրակիին կը յաջորդէ Նաւասարդ 1ի կիրակին, ինչ որ անկարելի եւ հակասական հանգիպում մըն է. որուն հետեւանքով թումանյանի աղիւսակին Օգոստոս 11 = Նաւասարդ 1էն մինչեւ Դեկտեմբեր 31 = Քաղոց 23ի շարթուան օրերը կը տարբերին Սարկաւազ վարդապետի օրացոյցի տուեալներէն. որովհետեւ թումանյան Օգոստոս 11էն Դեկտեմբեր 31ի օրերը Յունուարէն առաջ դնելով, իրականին մէջ փոքր թւականի թիւ 1 տարիէն դուրս հանած եւ դետեղած է դանոնք Շիրակացիի 532 տարեթիւին մէջ: Արդարեւ շարունակելով Շիրակացիի 532 (յառաջացած 533) տարեթիւին օրերը, կը տեսնենք որ Օգոստոս 11 կիրակի է եւ Դեկտեմբեր 31ը երեքշաբթի որուն կանոնաւոր կերպով կը հետեւի փոքր թուականի առաջին տարուան Յունուար 1ի չորեքշաբթին:

Այսպէս ըսելէ վերջ, կրնամ խնդրել Բ. Ե. Թումանյան եւ Հ. Ս. Բաղդաւան

տոմարագէտ աշխատակիցներէս, որ իրենց պատրաստած հայկական տոմարի օրացոյցներուն մէջ Օգոստոս-Նաւասարդը առաջին ամիս չընեն, Յունուարը՝ վեցերորդ ամիսի վերածելով. որպէսզի տարեթիւերու պատմական օրերը եւ լուսնի փուլերը իրենց ճիշտ ամսաթիւերուն վրայ մնան:

Յուլեան եւ Սարկաւազի օրացոյցով, պատմական թէ ժամանակակից տարեթիւերու շարթուան օրերը ճշտելու համար, նախ պէտք է տարեթիւին ճիշտ հօթներեակը գտնել, նայած թէ տարեթիւը ո՞ր խումբին կը պատկանի, նախաքերիստոնէական, քրիստոնէական, հայկական թէ Գրիգորեան նոր տոմարի:

Նախաքերիստոնէական, քրիստոնէական եւ հայկական հին տոմարի տարեթիւերու հօթներեակին համար՝ պէտք է դործածել օրացոյցի յուլեան ամսաթիւերու մօտը գտնուող շարաթադիրները, իսկ նոր տոմարի հօթներեակներուն համար պէտք է առաջնորդուել իմաստասէրի ամսաթիւերու քով դրուածներէն:

(Շար. 4)

Հ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱԳԱՄԵԱՆ

ԿԱՐԳ ԵՕԹՆԵՐԵԱԿՆԵՐՈՒ

Նախաբրիտոնական շրջան				Փրիստոնեական շրջանի եօթներեակներ				Հայկական տոմարի				
շրջան				Յուլեան եին տոմարի շրջան Յ. Քս.ի 1 - 1582 Հոկտ. 4:				եօթներեակ = մնացորդ շայոց ք.ին 28				
եօթներեակ = մնացորդ Ն. Ք. տարեքիւի 28				եօթներեակ = մնացորդ Քս.ի տարեքիւին 28				Քս.ի ք.ին — 552 28				
Հայոց				Հայոց Հռոմէական Հին տմ.ի				Հայոց				
Մնացորդ	Յուլեան տմ.ի	Շարժուն տմ.ի	Շրջան արեւային	Մնացորդ	Յուլեան տմ.ի	Շարժուն տմ.ի	Հայերէն Լատիններէն	Շրջան արեւային	Մնացորդ	Յուլեան տմ.ի	Շարժուն տմ.ի	Շրջան արեւային
1	ԴԵ	ԴԵ	9	1	Զ	ԵԶ	Բ B	10	1	Գ	ԴԵ	2
2	Գ	ԳԴ	8	2	Է	ԶԷ	Ա A	11	2	Դ	ԵԶ	3
3	Բ	ԲԳ	7	3	Ա	ԷԱ	Է G	12	3	Ե	ԶԷ	4
4	Ա	ԱԲ	6	4	ԲԳ	ԱԲ	ԶԵ FE	13	4	ԶԷ	ԷԱ	5
5	ԶԷ	ԷԱ	5	5	Դ	ԲԳ	Դ D	14	5	Ա	ԱԲ	6
6	Ե	ԶԷ	4	6	Ե	ԳԴ	Գ C	15	6	Բ	ԲԳ	7
7	Դ	ԵԶ	3	7	Զ	ԴԵ	Բ B	16	7	Դ	ԳԴ	8
8	Գ	ԴԵ	2	8	ԷԱ	ԵԶ	ԱԷ AG	17	8	ԴԵ	ԴԵ	9
9	ԱԲ	ԳԴ	1	9	Բ	ԶԷ	Զ F	18	9	Զ	ԵԶ	10
10	Է	ԲԳ	28	10	Դ	ԷԱ	Ե E	19	10	Է	ԶԷ	11
11	Զ	ԱԲ	27	11	Դ	ԱԲ	Դ D	20	11	Ա	ԷԱ	12
12	Ե	ԷԱ	26	12	ԵԶ	ԲԳ	ԳԲ CB	21	12	ԲԳ	ԱԲ	13
13	ԳԴ	ԶԷ	25	13	Է	ԳԴ	Ա A	22	13	Դ	ԲԳ	14
14	Բ	ԵԶ	24	14	Ա	ԴԵ	Է G	23	14	Ե	ԳԴ	15
15	Ա	ԴԵ	23	15	Բ	ԵԶ	Զ F	24	15	Զ	ԴԵ	16
16	Է	ԳԴ	22	16	ԳԴ	ԶԷ	ԵԴ ED	25	16	ԷԱ	ԵԶ	17
17	ԵԶ	ԲԳ	21	17	Ե	ԷԱ	Դ C	26	17	Բ	ԶԷ	18
18	Դ	ԱԲ	20	18	Զ	ԱԲ	Բ B	27	18	Դ	ԷԱ	19
19	Գ	ԷԱ	19	19	Է	ԲԳ	Ա A	28	19	Դ	ԱԲ	20
20	Բ	ԶԷ	18	20	ԱԲ	ԳԴ	ԷԶ GF	1	20	ԵԶ	ԲԳ	21
21	ԷԱ	ԵԶ	17	21	Դ	ԴԵ	Ե E	2	21	Է	ԳԴ	22
22	Զ	ԴԵ	16	22	Դ	ԵԶ	Դ D	3	22	Ա	ԴԵ	23
23	Ե	ԳԴ	15	23	Ե	ԶԷ	Դ C	4	23	Բ	ԵԶ	24
24	Դ	ԲԳ	14	24	ԶԷ	ԷԱ	ԲԱ BA	5	24	ԳԴ	ԶԷ	25
25	ԲԳ	ԱԲ	13	25	Ա	ԱԲ	Է G	6	25	Ե	ԷԱ	26
26	Ա	ԷԱ	12	26	Բ	ԲԳ	Զ F	7	26	Զ	ԱԲ	27
27	Է	ԶԷ	11	27	Դ	ԳԴ	Ե E	8	27	Է	ԲԳ	28
28	Զ	ԵԶ	10	28	ԴԵ	ԴԵ	ԴԴ DC	9	28	ԱԲ	ԳԴ	1

Քրիստոնէական շրջանի եօրներեակներ

Գրիգորեան կամ յուլեան նոր տոմարի շրջան. սկիզբ 1582 Հոկտ. 15

1582 Հոկտ. 15-էն

մինչեւ

1700

Եօրներեակ =
= մնացորդ

Քս.ի ք.ին

28

1701-էն

մինչեւ

1800

Եօրներեակ =
= մնացորդ

Քս.ի ք.ին

28

1801-էն

մինչեւ

1900

Եօրներեակ =
= մնացորդ

Քս.ի ք.ին

28

1901-էն

մինչեւ

2100

Եօրներեակ =
= մնացորդ

Քս.ի ք.ին

28

Նոր տոմարի
շարժումն օրա-
ցոյցի եօրներ-
եակները

Եօրներեակ =
= մնացորդ

Քս.ի ք.ին

7

կամ

Հայոց ք.ին — 1

7

Մնացորդ
Յուլեան Ն. տմ.ի
1 Ե
2 Դ
3 Գ
4 ԲԱ
5 Է
6 Զ
7 Ե
8 ԴԳ
9 Բ
10 Ա
11 Է
12 ԶԵ
13 Դ
14 Գ
15 Բ
16 ԱԷ
17 Զ
18 Ե
19 Դ
20 ԴԳ
21 Ա
22 Է
23 Զ
24 ԵԴ
25 Գ
26 Բ
27 Ա
28 ԷԶ

Մնացորդ
Յուլեան Ն. տմ.ի
1 Զ
2 Ե
3 Դ
4 ԳԲ
5 Ա
6 Է
7 Զ
8 ԵԴ
9 Գ
10 Բ
11 Ա
12 ԷԶ
13 Ե
14 Դ
15 Գ
16 ԲԱ
17 Է
18 Զ
19 Ե
20 ԴԳ
21 Բ
22 Ա
23 Է
24 ԶԵ
25 Դ
26 Գ
27 Բ
28 ԱԷ

Մնացորդ
Յուլեան Ն. տմ.ի
1 Է
2 Զ
3 Ե
4 ԴԳ
5 Բ
6 Ա
7 Է
8 ԶԵ
9 Դ
10 Գ
11 Բ
12 ԱԷ
13 Զ
14 Ե
15 Դ
16 ԳԲ
17 Ա
18 Է
19 Զ
20 ԵԴ
21 Գ
22 Բ
23 Ա
24 ԷԶ
25 Ե
26 Դ
27 Գ
28 ԲԱ

Մնացորդ
Յուլեան Ն. տմ.ի
1 Ա
2 Է
3 Զ
4 ԵԴ
5 Գ
6 Բ
7 Ա
8 ԷԶ
9 Ե
10 Դ
11 Գ
12 ԲԱ
13 Է
14 Զ
15 Ե
16 ԴԳ
17 Բ
18 Ա
19 Է
20 ԶԵ
21 Դ
22 Գ
23 Բ
24 ԱԷ
25 Զ
26 Ե
27 Դ
28 ԳԲ

Մնացորդ
Եօրներեակ
1 ԲԳ
2 ԴԴ
3 ԴԵ
4 ԵԶ
5 ԶԷ
6 ԷԱ
7 ԱԲ

ՅՈՒԼԵԱՆ ԵՒ ՍԱՐԿԱԻԱԳԱԴԻՐ ՏՈՄԱՐՆԵՐՈՒՆ ՕՐԱՅՈՅՑԸ

ՅՈՒՆՈՒԱՐ					ՓԵՏՐՈՒԱՐ					ՄԱՐՏ					ԱՊՐԻԼ					ՄԱՅԻՍ					ՅՈՒՆԻՍ				
1 Քաղոց					Արաց					Մհեհկի					Արեգ					Ահկի					Մարերի				
2	3	4	5		1	Գ	Դ	25	1	Գ	Դ	23	1	Ա	Է	24	1	Զ	Բ	24	1	Գ	Ե	25					
1	Է	Ա	24		1	Գ <td>Դ</td> <td>25</td> <td>2</td> <td>Գ</td> <td>Ե</td> <td>24</td> <td>2</td> <td>Է</td> <td>Ա</td> <td>25</td> <td>2</td> <td>Ե</td> <td>Գ</td> <td>25</td> <td>2</td> <td>Բ</td> <td>Զ</td> <td>26</td>	Դ	25	2	Գ	Ե	24	2	Է	Ա	25	2	Ե	Գ	25	2	Բ	Զ	26					
2	Զ	Բ	25		2	Գ	Ե	26	3	Բ	Զ	25	3	Զ	Բ	26	3	Գ	Դ	26	3	Ա	Է	27					
3	Ե	Գ	26		3	Բ	Զ	27	4	Ա	Է	28	4	Ե	Գ	27	4	Գ	Ե	27	4	Է	Ա	28					
4	Դ	Դ	27		4	Ա	Է	28	5	Է	Ա	27	5	Գ	Դ	28	5	Բ	Զ	28	5	Զ	Բ	29					
5	Գ	Ե	28		5	Է	Ա	29	6	Զ	Բ	28	6	Գ	Ե	29	6	Ա	Է	29	6	Ե	Գ	30					
6	Բ	Զ	29		6	Զ	Բ	30	7	Ե	Դ	29	7	Բ	Զ	30	7	Է	Ա	30									
7	Ա	Է	30		Մհեհկի					8	Դ	Դ	30	Ահկի					Մարերի					7	Գ	Դ	1		
Արաց					7	Ե	Դ	1	Արեգ					8	Ա	Է	1	8	Զ	Բ	1	8	Գ	Ե	2				
8	Է	Ա	1		8	Դ	Դ	2	Արեգ					9	Է	Ա	2	9	Ե	Գ	2	9	Բ	Զ	3				
9	Զ	Բ	2		9	Գ	Ե	3	9	Գ	Ե	1	9	Է	Ա	2	9	Ե	Գ	2	9	Բ	Զ	3					
10	Ե	Գ	3		10	Բ	Զ	4	10	Բ	Զ	2	10	Զ	Բ	3	10	Դ	Դ	3	10	Ա	Է	4					
11	Դ	Դ	4		11	Ա	Է	5	11	Ա	Է	3	11	Ե	Գ	4	11	Գ	Ե	4	11	Է	Ա	5					
12	Գ	Ե	5		12	Է	Ա	6	12	Է	Ա	4	12	Դ	Դ	5	12	Բ	Զ	5	12	Զ	Բ	6					
13	Բ	Զ	6		13	Զ	Բ	7	13	Զ	Բ	5	13	Գ	Ե	6	13	Ա	Է	6	13	Ե	Դ	7					
14	Ա	Է	7		14	Ե	Գ	8	14	Ե	Գ	6	14	Բ	Զ	7	14	Է	Ա	7	14	Դ	Դ	8					
15	Է	Ա	8		15	Գ	Դ	9	15	Գ	Դ	7	15	Ա	Է	8	15	Զ	Բ	8	15	Գ	Ե	9					
16	Զ	Բ	9		16	Գ	Ե	10	16	Գ	Ե	8	16	Է	Ա	9	16	Ե	Գ	9	16	Բ	Զ	10					
17	Ե	Գ	10		17	Բ	Զ	11	17	Բ	Զ	9	17	Զ	Բ	10	17	Դ	Դ	10	17	Ա	Է	11					
18	Դ	Դ	11		18	Ա	Է	12	18	Ա	Է	10	18	Ե	Գ	11	18	Գ	Ե	11	18	Է	Ա	12					
19	Գ	Ե	12		19	Է	Ա	13	19	Է	Ա	11	19	Դ	Դ	12	19	Բ	Զ	12	19	Զ	Բ	13					
20	Բ	Զ	13		20	Զ	Բ	14	20	Զ	Բ	12	20	Գ	Ե	13	20	Ա	Է	13	20	Ե	Դ	14					
21	Ա	Է	14		21	Ե	Գ	15	21	Ե	Գ	13	21	Բ	Զ	14	21	Է	Ա	14	21	Դ	Դ	15					
22	Է	Ա	15		22	Դ	Դ	16	22	Դ	Դ	14	22	Ա	Է	15	22	Զ	Բ	15	22	Գ	Ե	16					
23	Զ	Բ	16		23	Գ	Ե	17	23	Գ	Ե	15	23	Է	Ա	16	23	Ե	Գ	16	23	Բ	Զ	17					
24	Ե	Գ	17		24	Բ	Զ	18	24	Բ	Զ	16	24	Զ	Բ	17	24	Դ	Դ	17	24	Ա	Է	18					
25	Դ	Դ	18		25	Ա	Է	19	25	Ա	Է	17	25	Ե	Գ	18	25	Գ	Ե	18	25	Է	Ա	19					
26	Գ	Ե	19		26	Է	Ա	20	26	Է	Ա	18	26	Դ	Դ	19	26	Բ	Զ	19	26	Զ	Բ	20					
27	Բ	Զ	20		27	Զ	Բ	21	27	Զ	Բ	19	27	Գ	Ե	20	27	Ա	Է	20	27	Ե	Դ	21					
28	Ա	Է	21		28	Ե	Գ	22	28	Ե	Գ	20	28	Բ	Զ	21	28	Է	Ա	21	28	Դ	Դ	22					
29	Է	Ա	22		29				29	Դ	Դ	21	29	Ա	Է	22	29	Զ	Բ	22	29	Գ	Ե	23					
30	Զ	Բ	23						30	Գ	Ե	22	30	Է	Ա	23	30	Ե	Գ	23	30	Բ	Զ	24					
31	Ե	Գ	24						31	Բ	Զ	23					31	Դ	Դ	24									

1.- Յուլեանին զուգընթաց Հայոց սարկաւազադի ամիսները: 2.- Յուլեան տմ.ի ամսաքիւնը:
 3.- Հայոց յուլեան տմ.ի շարաքազիքը, ինչ տոմարի տնոդութեան. նախաքիստոնեական,
 քիստոնեական եւ հայկական տարիքիներու իջնեքեքներուն համար: 4.- Գրիգորեան կամ
 յուլեան մ. տմ.ի շարաքազիքը, նոր տոմարի իջնեքեքներուն համար: 5.- Սարկաւազա-
 դիք ամիսներուն ամսաքիւնը:

ՅՈՒԼԻՍ				ՕԳՈՍՏՈՍ				ՍԵՊՏԵՄԲԵՐ				ՀՈԿՏԵՄԲԵՐ				ՆՈՅԵՄԲԵՐ				ԴԵԿՏԵՄԲԵՐ			
Մարգագ				Հրոսից				Նաւասարդ				Հոռի				Սահմի				Տրէ			
1	Ա	է	25	1	Ե	Գ	26	1	Բ	Ձ	22	1	Է	Ա	22	1	Դ	Դ	23	1	Բ	Ձ	23
2	Է	Ա	26	2	Գ	Դ	27	2	Ա	է	23	2	Ջ	Բ	23	2	Դ	Ե	24	2	Ա	է	24
3	Ջ	Բ	27	3	Դ	Ե	28	3	Է	Ա	24	3	Ե	Գ	24	3	Բ	Ձ	25	3	Է	Ա	25
4	Ե	Գ	28	4	Բ	Ձ	29	4	Ջ	Բ	25	4	Դ	Դ	25	4	Ա	է	26	4	Ջ	Բ	26
5	Դ	Դ	29	5	Ա	է	30	5	Ե	Գ	26	5	Դ	Ե	26	5	Է	Ա	27	5	Ե	Գ	27
6	Դ	Ե	30	Աւելաց				6	Դ	Ե	27	6	Բ	Ձ	27	6	Ջ	Բ	28	6	Դ	Դ	28
Հրոսից				6	Է	Ա	1	8	Բ	Ձ	29	8	Է	Ա	29	8	Դ	Դ	30	8	Բ	Ձ	30
7	Բ	Ջ	1	7	Ջ	Բ	2	9	Ա	է	30	9	Ջ	Բ	30	Տրէ				Բարդ			
8	Ա	է	2	8	Ե	Գ	3	Հոռի				Սահմի				9	Դ	Ե	1	9	Ա	է	1
9	Է	Ա	3	9	Դ	Դ	4	10	Է	Ա	1	10	Ե	Գ	1	10	Բ	Ձ	2	10	Է	Ա	2
10	Ջ	Բ	4	10	Դ	Ե	5	11	Ջ	Բ	2	11	Դ	Դ	2	11	Ա	է	3	11	Ջ	Բ	3
11	Ե	Գ	5	Նաւասարդ				12	Ե	Գ	3	12	Դ	Ե	3	12	Է	Ա	4	12	Ե	Գ	4
12	Դ	Դ	6	11	Բ	Ձ	1	13	Դ	Դ	4	13	Բ	Ձ	4	13	Ջ	Բ	5	13	Դ	Դ	5
13	Դ	Դ	7	12	Ա	է	2	14	Դ	Ե	5	14	Ա	է	5	14	Ե	Գ	6	14	Դ	Ե	6
14	Բ	Ձ	8	13	Է	Ա	3	15	Բ	Ձ	6	15	Է	Ա	6	15	Դ	Դ	7	15	Բ	Ձ	7
15	Ա	է	9	14	Ջ	Բ	4	16	Ա	է	7	16	Ջ	Բ	7	16	Դ	Ե	8	16	Ա	է	8
16	Է	Ա	10	15	Ե	Գ	5	17	Է	Ա	8	17	Ե	Գ	8	17	Բ	Ձ	9	17	Է	Ա	9
17	Ջ	Բ	11	16	Դ	Դ	6	18	Ջ	Բ	9	18	Դ	Դ	9	18	Ա	է	10	18	Ջ	Բ	10
18	Ե	Գ	12	17	Դ	Ե	7	19	Ե	Գ	10	19	Դ	Ե	10	19	Է	Ա	11	19	Ե	Գ	11
19	Դ	Դ	13	18	Բ	Ձ	8	20	Դ	Դ	11	20	Բ	Ձ	11	20	Ջ	Բ	12	20	Դ	Դ	12
20	Դ	Ե	14	19	Ա	է	9	21	Դ	Ե	12	21	Ա	է	12	21	Ե	Գ	13	21	Դ	Ե	13
21	Բ	Ձ	15	20	Է	Ա	10	22	Բ	Ջ	13	22	Է	Ա	13	22	Դ	Դ	14	22	Բ	Ձ	14
22	Ա	է	16	21	Ջ	Բ	11	23	Ա	է	14	23	Ջ	Բ	14	23	Դ	Ե	15	23	Ա	է	15
23	Է	Ա	17	22	Ե	Գ	12	24	Է	Ա	15	24	Ե	Գ	15	24	Բ	Ձ	16	24	Է	Ա	16
24	Ջ	Բ	18	23	Դ	Դ	13	25	Ջ	Բ	16	25	Դ	Դ	16	25	Ա	է	17	25	Ջ	Բ	17
25	Ե	Գ	19	24	Դ	Ե	14	26	Ե	Գ	17	26	Դ	Ե	17	26	Է	Ա	18	26	Ե	Գ	18
26	Դ	Դ	20	25	Բ	Ձ	15	27	Դ	Դ	18	27	Բ	Ձ	18	27	Ջ	Բ	19	27	Դ	Դ	19
27	Դ	Ե	21	26	Ա	է	16	28	Դ	Ե	19	28	Ա	է	19	28	Ե	Գ	20	28	Դ	Ե	20
28	Բ	Ձ	22	27	Է	Ա	17	29	Բ	Ձ	20	29	Է	Ա	20	29	Դ	Դ	21	29	Բ	Ձ	21
29	Ա	է	23	28	Ջ	Բ	18	30	Ա	է	21	30	Ջ	Բ	21	30	Դ	Ե	22	30	Ա	է	22
30	Է	Ա	24	29	Ե	Գ	19					31	Ե	Գ	22					31	Է	Ա	23
31	Ջ	Բ	25	30	Դ	Դ	20																
				31	Դ	Ե	21																